

## ԲԱՅՐՈՆԸ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՄՕՏ

1816 թուականի ապրիլի 25-ին Բայրոնը, խորապէս դժգոհ էր միջավայրից, հեռանում է Անգլիայից, այլեւս չվերադառնալու որոշմամբ։ Նոյն թուականի աշնանը նա ծանօթանում է Մխիթարեանների հետ։ «Արեւելեան այդ հին ժողովրդի կրօնը, գրականութիւնը, պատմութիւնը՝ այս ամէնը, հետաքրքրեցին նրան, զրում է ոռւս անուանի գրաքննադատ եռու։ Ա. Վեսելովսկին, իսկ կղզու բնակիչների հեղահամբոյր, սրտաբաց վերաբերմունքը էլ աւելի կապեց նրան իւրատիպ գաղութին։ Նա առնելի յաճախ, քան առաջ, սկսեց այցելել իր նոր ծանօթներին։ Եւ մի անգամ չէ, որ դիմակահանդէսի ամենաեռուն պահին, թեթեւ մակոյկը տարել է նրան Ս. Ղազարի խաղաղ մենաստան։ Ճիշտ է, այստեղ ամէն ինչ չափազանց հեռու էր կեանքից, բայց, իրբեւ հակադրութիւն վենետիկեան եռուզեռին, այս խաղաղութիւնն ու անդորրը ոչ միայն տհաճ չէին թուում, այլև երբեմն ուղղակիօրէնք բերկրանք էին պատճառում խոնջացած բանաստեղծին»<sup>1</sup>։ Այդ մասին է վկայում նաեւ Բայրոնի գործունէութեան իտալական շրջանի մասին Թոմաս Մուլի հետեւեալ մէջբերումը՝ քաղուած կոմսուհի իջազելլա Ալբրիցցիի «Դիմանկարներ» գրքից։ «Ամբողջ ձմեռ, ամէն առաւօտ նա դուրս էր գալիս, մակոյկով մենմենակ ճեղքում էր ջուրը՝ հայոց կղզի գնալու համար (կղզեակ մի խաղաղ լճակի մէջ եւ վենետիկից մօտաւորապէս կէս լիգ<sup>2</sup> հեռու), գնում էր վայելելու տեղի գիտուն եւ հիւրասէր վանականների ընկերակցութիւնը, սովորելու նրանց դժուարին լեզուն։ Իսկ երեկոյնան, դարձեալ մակոյկով, վերադառնում էր, հիւր գնում, սակայն մի երկու ժամով միայն»<sup>3</sup>։

1 Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, 1972, с. 393.

2 Մէկ լիգը հաւասար է երեք ծովակին մղոնի (5.58 կմ.)։

3 MOORE THOMAS, *Letters and Journals of Lord Byron: with Notices of His Life, in four volumes*, Paris, 1831, v. III, p. 322.

Բայրոնը մտերմանում է Միհիթարեանների հետ, սիրում նրանց ձեռնարկած գործը եւ նպատակը, հայոց հին լեզուն եւ մատենագրութիւնը։ ԺԼ դարի սկզբներին, երբ հայերը տառապում էին մի կողմից սուլթանական Թուրքիայի, իսկ միւս կողմից՝ շահական Պարսկաստանի լծի տակ, Վենետիկից ոչ հեռու գտնուող Ս. Ղազար փոքրիկ կղզին թերեւս միակ վայրն էր աշխարհում, որտեղ ազատ ու անկաշկանդ հնչում էր հայոց լեզուն եւ հանգամանօրէն ուսումնասիրում հայ հինաւուրց մշակոյթն ու գրականութիւնը։ Զայրենիքից հեռու գտնուող այդ գողտրիկ կղզեակի Ս. Ղազար մայրավանքում եւրոպական քաղաքակրթութիւնից յոգնած բանաստեղծը սկսում է ուսումնասիրել հայերէն՝ երազելով ներթափանցել արեւելեան բանաստեղծութեան գաղտնարանները։

Բայրոնը հայերէն սովորելու նպատակով ստիպուած է եղել ամէն օր առաւօտեան գնալ Ս. Ղազար, իսկ երեկոյեան վերադառնալ Վենետիկ, քանի որ Միհիթարեան միաբանութեան խստաբարոյ հայրերը չեն թոյլատրել բանաստեղծին ժամանակաւոր բնակութիւն հաստատել վանքում։ Այդ մասին համապատասխան գրառում կայ Յ. Աւգերեանի «Ինքնապատում օրագրութիւնում»։ «Lord Byron գերահոչակ եւ աշխարհաքարոզ բանաստեղծ Անդղիացի՝ զորոյ զգրուածո գնէին ի կշիռ ոսկւոյ, եկեալ ի տեսութիւն վանացս՝ խնդրեաց ուսանել ի նմանէ զՀայկական բարբառ. եւ կամէր եւս բնակել ի վանս։ Բայց քանզի ոչ ոք ի Միհրանից ճանաչչը զնա ցայնֆամ, ասացաւ նմա գալ ի Վենետիկոյ զօր ամենայն, եւ այնպէս ուսանել։ Եւ նա սկսաւ գալ աւուրս յիսուն եւ ուսանէր ժամս երկուս կամ երիս, մանաւանդ թէ անցուցանէր ի զրոյցս ի սփոփանս անձին։ Էր նա երիտասարդ աշխոյժ, զուարթաբարոյ եւ բոցակն. եւ թէպէտ կաղ էր միով ոտամբ, բայց գեղեցիկ էր դիմօք»<sup>4</sup>։

Բայրոնի հայերէնի ուսուցիչը՝ Յարութիւն Աւգերեանը, մի ընդարձակ, յատուկ սրահ էր յատկացրել բանաստեղծին։ Այն մինչեւ օրս էլ կրում է «Բայրոնի սենեակ» անուանումը։ Եւ հէնց այդ սրահում, որը, եռւ. Վեսելովսկու արտայայտութեամբ, «չնչում էր արեւելքով ու հուլթեամբ», սկսուեցին Բայրոնի հայերէնի առաջին դասերը։

<sup>4</sup> ՏԱՅԵԱՆ Հ. ՂԵՒՈՒԴԻ, Լորտ Պայրըն ի Ս. Ղազար, «Բազմավէպ», 1924, N 4, էջ 135, 136։

1816-1818 թթ. ապրելով Վենետիկում, Բայրոնը գրել է բազմաթիւ նամակներ, որոնցում տուել է վենետիկեան կեանքի վառ եւ մանրամասնութիւններով լի պատկերը, ներառեալ Վենետիկի Մխիթարեանների ծաւալած գիտական ու լուսաւորչական գործունէութեան նկարագրութիւնը: Շփուելով հայ մշակոյթի կարկառուն գործիչների հետ, Բայրոնը պատմութեանն է թողել արժանահաւատութեան ու նորոյթի տեսակէտից հազուագիւտ փաստեր պարունակող եւ իր տեսակի մէջ միակը հանդիսացող հարուստ Մխիթարեանների գործունէութեան վերաբերեալ:

Միւս կողմից, նրա «Հայկական» նամակներն ինքնին արժէ-քաւոր եւ վառ ապացոյցն են այն մեծ դերի, որ խաղացել է անգլիացի բանաստեղծը հայ մշակոյթը օտարներին ծանօթացնելու գործում:

Մեր կատարած հետազօտութիւնները բերում են այն եզրայանգման, որ Բայրոնի նամակների միջոցով է անգլիախօս ընթերցողը առաջին անգամ ծանօթանում դեռեւ ԺԼ դարի սկզբից ողջ եւրոպայում մեծ համբաւ ու հռչակ վայելած հայագիտական խոչոր կենտրոնի՝ Վենետիկի Մխիթարեանների կատարած գիտական ու լուսաւորչական աշխատանքին եւ գաղափար կազմում նրանց այնպիսի կարկառուն դէմքերի մասին, ինչպիսիք են Յարութիւն Ալգերեանը (1774-1854), Ագոնց Գիւվերը (1740-1824), Սարգիս Թէոդորեանը (1783-1877), Սուքիսս Սոմալեանը (1776-1846) եւ ուրիշներ: Բայրոնը սկսում է կանոնաւոր յաճախել Ս. Ղազար կողին եւ ուսումնասիրել հայոց լեզուն:

1816 թուականի գեկտեմբերի 4-ին Մըրբէյին ուղղուած նամակում Բայրոնը յայտնում է հայերէնի իր ուսումնառութեան ընթացքի եւ այն բացառիկ արժէքաւոր տեղեկութիւնների մասին, որ նա ստացել է հայ գրականութեան, հայ ժողովրդի բարքերի ու սովորութիւնների վերաբերեալ: Նա հիացել է հայ վանական գիտնականների բանիմացութեամբ, քաջատեղեակութեամբ, կրթուածութեամբ եւ իրենց ժողովրդի լուսաւորութեան համար կատարած խոչոր աշխատանքներով. «...սկսել եւ շրու-նակում եմ հայոց լեզուի ուսումնառութիւնը, որին տիրապետում եմ հնարաւորութիւններիս սահմաններում,- գրում է Բայրոնը այդ նամակում,- ամէն օր գնում եմ հայկական վանք դասեր առնելու մի գիտնական վանականից (խօսքը Յ. Ալգերեանի մասին է - Ա. Բ.) եւ որոշ բացառիկ ու օգտակար տեղեկու-

թիւններ եմ արդէն ձեռք բերել արեւելեան այդ ժողովրդի գրականութեան եւ սովորութիւնների մասին։ Նրանք այստեղ ունեն հաստատութիւն, եկեղեցի եւ իննասուն վանականից բաղկացած միաբանութիւն։ Նրանցից ոմանք շատ ուսեալ եւ կիրթ մարդիկ են։ Ունեն նաեւ տպարան եւ մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսաւորելու համար»<sup>5</sup>:

Յարութիւն Աւգերեանը բազմաթիւ արժէքաւոր տեղեկութիւններ է տուել Բայրոնին հայ ինքնուրոցն եւ թարգմանական գրականութեան վերաբերեալ։ Թարգմանութիւնները, որոնք հիմնականում կատարւում էին յունարէնից, պարսկերէնից, ասորերէնից եւ լատիներէնից, նպաստել են հայ մատենագրութեան զարգացմանը՝ հանդիսանալով նրան սննուցող հիմնական աղբիւրներից մէկը։ Համաշխարհային մշակոյթի ուսումնասիրութեան համար մեծ արժէք ներկայացնող շատ գրական յուշարձաններ պահպանուել են միմիայն գոյութիւն ունեցող հայերէն թարգմանութիւնների շնորհիւ։ Այդ մասին Բայրոնը յիշատակում է վերոյիշեալ նամակում, որտեղ մասնաւորաբար նշում է, որ «վանքում կան մի շարք չափազանց հետաքրքիր ձեռագրեր, գրքեր, ինչպէս նաեւ թարգմանութիւններ այժմ կորած յունարէն բնագրերից, նաեւ պարսկերէնից, ասորերէնից եւ այլն, չհաշուած իրենց ժողովրդի բնիկ երկերը»։

Ուշագրաւ է, որ Բայրոնի քնարերգութեան այս շրջանը, երբ բանաստեղծը բուռն ոգեւորութեամբ տարուած էր հայերէնով, հայ գրականութեամբ եւ մշակոյթով, նշանաւորւում է վառու համարձակ քնարական նորարարութեամբ («Մանֆրէդ», «Տասոյի գանգատը», «Զայլը Զարուլի ուխտագնացութեան» վերջին նուագը, «Սարդանապալ», «Կայէն» եւ այլն)։ Նամակների սեղմ տողերի մէջ զգացւում է ոչ միայն բանաստեղծի ջերմ ու յարգալից վերաբերմունքը հայ վանական-գիտնականների նկատմամբ, այլեւ, որ պակաս արժէքաւոր չէ, ուրուագծւում են նրանց բնաւորութիւնն ու էութիւնն ի ցոյց դնող, բանաստեղծական խորաթափանցութեամբ գիտուած բնորոշ մանրամասներ։

1816 թուականի դեկտեմբերի 27-ի նամակում՝ ուղղուած Մըրէյին, բանաստեղծը գրում է. «Զայրերի առաջնորդը եպիս-

<sup>5</sup> MOORE THOMAS, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 333.

կոպոս է, մի հրաշալի ծերունազարդ մարդ՝ ասուպաձեւ մօրուքով։ Հայր Պասկալը նոյնպէս զարգացած ու բարեպաշտ մարդ է»<sup>6</sup>։ Այստեղ խօսքը վերաբերում է աբբահայր Ագոնց Գիւվերին եւ Յարութիւն Աւգերեանին, որին Բայրոնը սիրում էր անուանել «Հայր Պասկալ»։ Այստեղ արժէ յիշատակել, որ Ագոնց Գիւվերը, անխոնջ գործունէութեան, ճկուն դիւանագիտական քաղաքականութեան, գիտելիքների խորիմացութեան, հմուտ վարուելակերպի եւ ճարտասանութեան չնորհիւ, կարողացաւ սերտ կապերի մէջ մտնել զանազան երկրների թագաւորների, կայսրերի, իշխանութիւնների հետ եւ խօսքով ու գործով ապացուցել նրանց, որ Մխիթարեան միաբանութիւնը վանական-գիտնականների մի միաձոյլ ընտանիք է, ազգային մշակոյթի զարգացման կենտրոն, որի գլխաւոր նպատակն է հաւաքել եւ կորստից փրկել ամէնուր սփուռած հայկական ճեռագիր մատեանները, հրատարակել հայ մատենագիրների, պատմիչների, տաղերգուների գործերը, ինչպէս նաեւ լուսաւորչական աշխատանք ծաւալել ազգի մէջ։ Այցելելով Ս. Ղազար, Բայրոնը օրըստօրէ աւելի է ոգեւորում «Հայոց կղզով», սիրում ու յարգում հայ ազգը, հետաքրքրում նրա պատմութեամբ ու մշակոյթով։ Անշուշտ այս գործում իր համեստ ներդրումն ունի Յարութիւն Աւգերեանը՝ Բայրոնի խօսքերով ասած այդ «զարգացած ու բարեպաշտ մարդը»։ Աւգերեանի չնորհիւ Վենետիկում անցկացրած երեք տարիները (1816-1818) Բայրոնի համար դարձել են գիտական համագործակցութեան բեղուն վրձն։ Նրանք միասին պատրաստել եւ հրատարակել են անգլերէն-հայերէն, Հայերէն-անգլերէն քերականութեան ճեռնարկները եւ անգլերէն-հայերէն բառարանը։ Բացի դրանից Բայրոնը կատարել է որոշ թարգմանութիւններ հայ մատենագրութիւնից, որոնք նրա նամակներից քաղուած առանձին հատուածների եւ այլ արժէքաւոր փաստաթղթերի հետ մեկտեղ Մխիթարեանները ամփոփել են 1870 թուականին Ս. Ղազարում տպագրուած (իսկ 1907 թուականին վերահատարակուած) "Lord Byron's Armenian Exercises and Poetry" խորագիրը կրող ժողովածուի մէջ (անգլերէն եւ հայերէն)։

Բայրոնի 1816-1818 թթ. «Հայկական» հանդիպումները նպաստեցին թէ՛ Բայրոնի, թէ՛ Մխիթարեանների փառքի տարածմանը ամբողջ Եւրոպայում։

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 335։

Այսպիսով Զ. Գ. Բայրոնի շնորհիւ հայոց լեզուն եւ հայ մշակոյթը մտան եւրոպացիների հետաքրքրութիւնների շրջանագիր մէջ: Բայրոնի եւ Մխիթարեանների հանդիպումները առիթ հանդիսացան, որ Ս. Ղազար այցելեն բազմաթիւ օտարերկրացիներ եւ, ինչպէս նշում է Բայրոնի հայոց լեզուի ուսուցիչը, «իսակս ուսանելոյ նորա ի վանս՝ հոչակեցաւ եւ անուն վանաց»<sup>7</sup>:

Բայրոնից յետոյ Ս. Ղազար են այցելել այնպիսի նշանաւոր մարդիկ, ինչպիսիք են Թ. Մուրը (1819), Վ. Ֆլորիւալը (1828), Վ. Սկոտը (1832), Յ. Պետերմանը (1833), Ա. Միւսէն (1834), Ժ. Սանդը (1834), Է. Թէյլորը (1851), Յ. Ավազովսկին (1869), Ժ. Օֆենբախը (1870), Է. Դուգէն (1886) եւ շատ ուրիշներ:

Բայրոնի եւ Մխիթարեանների միջեւ եղած մտերմութեան վկայութիւնն են Մկրտիչ Աւգերեանի (1762-1854) Ագոնց աբբահօրը ուղղուած 1817 թուականի փետրուարի 15-ի նամակի հետեւեալ տողերը. «Ուրախ եմք ընդ բարի բարի խորհուրդս լորտին»<sup>8</sup>: Իսկ Ղուկաս ինճինեանը (1758-1833) 1817 թուականին Կ. Պոլսից Ագոնց աբբահօրը խնդրում է, որ նա առաջարկի Բայրոնին «...գրել ինչ անդղերէն ի վերայ Միաբանութեան մերոյ, զոր ինչ ետես աչօք, թէ զինչ նպատակ ունի Միաբանութիւն մեր, եւ զինչ գանձ արեւելեան ձեռագրաց ժողովեալ ունի ի մենաստանի եւ այլն...»<sup>9</sup> եւ աւելացնում, որ խորհրդարանի անդամները, իմանալով Բայրոնի Ս. Ղազար կատարած այցելութիւնների մասին, Ազգային ժողովում նպաստաւոր դիրք են բռնել Մխիթարեան միաբանութեան հանդէպ:

Չնայած Բայրոնի նամակների հակիրճութեանը, դրանց մանրազնին ուսումնասիրութիւնը ի յայտ է բերում նաև Մխիթարեանների բազմակողմանի գործունէութեան մի այլ բնագաւառ: Այն է՝ հայ պատանիների կրթման ու դաստիարակման գործը: 1817 թուականի Յունիսի 8-ին Զոն Մըրրէյին հասցէագրած նամակում Բայրոնը գրում է. «Այս նամակը պաշտօնապէս Ձեզ կը յանձնեն երկու հայ վանականներ, որոնք Անգլիայով ուղեւորում են Մադրաս: Եթէ որեւէ բանով կարող էք օգտակար

<sup>7</sup> ՏԱՅԵՍԱՆ Հ. ՂԵՒՈՒԴ, Լորտ Պայրըն ի Ս. Ղազար, «Բազմավէպ», 1924, N 4, էջ 136:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 137:

<sup>9</sup> Նոյն տեղում:

լինել նրանց՝ ծովայինների կամ էլ Արեւելեան Հնդկաստանի Ձեզ ծանօթ անձանց միջոցով, ապա ես աւելի քան երախտապարտ կը լինեմ... Նրանց անուններն են Հ. Սուքիաս Սոմալեան եւ Հ. Սարգիս Թէոդորոսեան: (Խօսքը Ս. Թէոդորեանի մասին է - Ա. Բ.): Խօսում են իտալերէն, հաւանաբար Փրանսերէն եւ մի քիչ էլ անգլերէն: Կրկին յիշեցնում եմ խնդրանքս, յարդանքներով միշտ Ձեր՝ Բայրոն:

Գուցէ կարողանաք օգնել նրանց ուղեւորութեանը, տալով կամ ձեռք բերելով յանձնարարականներ՝ Հնդկաստանում ներկայցնելու համար»<sup>10</sup>:

Հետազօտութիւններից պարզւում են Ս. Սոմալեանի եւ Ս. Թէոդորեանի Հնդկաստան կատարելիք այցի դրդապատճառները, որոնք ինքնին վկայութիւն են այն փաստի, որ Մխիթարեաններին մշտապէս մտահոգել է նաեւ հայազգի զաւակների կրթման կարեւոր ու հայրենասիրական գործը: Ինչպէս լայտնի է, եռանդուն ջանքերի չնորհիւ նրանք ստեղծել են վարժարաններ, որոնք իրենց ազգապահապան գործունէկութեամբ երկար տարիներ լոյս են սփռել հայ գաղթավայրերում: Հնդկահայ մեծահարուստներ կդուարդ Ռաֆայէլի Ղարամեանը (1730-1795) եւ Սամուէլ Մկրտչի Մուրադեանը (1760-1815) Մխիթարեան միաբանութեանն են կտակում գումար՝ հայազգի զաւակների կրթման վարժարաններ բացելու նպատակով: Ս. Սոմալեանը եւ Ս. Թէոդորեան կտակարարների որդիների հետ բանակցութիւններ վարելու եւ կտակները ձեռք բերելու նպատակով 1817 թուականի Յունուարի 16-ին մեկնել են Մադրաս՝ լիազօրուած ոչ միայն Ս. Ղազար վանքի բոլոր վարդապետների ստորագրութեամբ վաւերացուած փաստաթղթերով<sup>11</sup>, այլեւ տարաշխարհիկ ժողովրդի ճակատագրով հետաքրքրուող անգլիացի բանաստեղծի յանձնարարական նամակով՝ ուղղուած Զոն Մըրէյին:

Հայ-անգլիական գրական առլնչութիւնների պատմութեան մէջ նշանակալի տեղ են գրաւում նաեւ հայագիտութեան ասպարէզում Բայրոնի կատարած ուսումնասիրութիւնները: Վիստոն եղբայրներից յետոյ անգլիական իրականութեան մէջ Բայրոնն

10 MOORE THOMAS, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, 1908, p. 158.

11 ՏԵ՛Ն Սամուէլ Մուրատեան. ազգային մնած բարերար, «Բազմավիպ», 1936,

N 8-12, էջ 181:

էր, որ սկսեց զբաղուել հայոց լեզուի եւ հայ մշակոյթի ուսումնասիրութեամբ:

Բայրոնի նամակներից ակնառու է դառնում նրա խոր յարգանքը եւ համակրանքը հայոց լեզուի նկատմամբ: Իր խոստովանութեամբ դա «...մի հարուստ լեզու է», արժանի մանրազնին ուսումնասիրութեան, որի ընթացքում «լիովին փոխհատուցում են սովորողի չարչարանքները»<sup>12</sup>:

1817 թուականին, ինչպէս վերը նշուեց, Յարութիւն Աւգերեանը եւ Բայրոնը միացեալ ջանքերով հրապարակում են անգլերէն-հայերէն քերականութեան ձեռնարկը՝ հայերի օգտագործման համար: Դեռեւ 1816 թուականի դեկտեմբերի 24-ին Թումաս Մուրին ուղղուած նամակից տեղեկանում ենք. «Առաւտուները մակոյկով գնում եմ Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերէն թոթովելու եւ օգնելու նրանցից մէկին (խօսքը Յ. Աւգերեանի մասին է - Ա. Բ.) անգլերէնը ուղղելու անգլերէն-հայերէն քերականութեան մէջ, որը շուտով հրատարակուելու է»<sup>13</sup>: Բանաստեղծը, կարծես թէ փոխհատուցման համար, առաջարկում է իր ուսուցչին հրատարակել այն իր միջոցներով, ինչպէս նաեւ հոգում, որ այն տարածում գտնի: Այդ մասին նա գրում է Անգլիայում գտնուող իր ընկերներին, գովեստով խօսում Աւգերեանի տաղանդի եւ գիտելիքների մասին, կրկին իր հիացմունքը յայտնում Միթարեանների գործունչութեան վերաբերեալ: «Մէկ այլ ծրարով ուղարկում եմ Ձեզ մի քանի թերթ անգլերէն-հայերէն քերականութիւնից՝ հայերի օգտագործման համար,- գրում է Բայրոնը Զոն Մըրթէյին 1817 թուականի Յունուուրի 2-ի նամակում, - որի հրատարակմանը ես իրօք խթանել եւ աջակցել եմ: (Այն ինձ վրայ նստեց ընդդամէնը հազար ֆրանկ՝ ֆրանսիական լիվը<sup>14</sup>): Դեռ շարունակում եմ հայոց լեզուի դասերա, ճիշտ է ոչ բուռն առաջադիմութեամբ, բայց եւ օրէցօք եղածին մի բան աւելացնելով: Հայր Պասկալը իմ աննշան օգնութեամբ (նրա իտալերէնը անգլերէնի եմ թարգմանում) շարունակում է պատրաստել հայերէն-անգլերէն քերականութեան (անգլիացիների համար) ձեռագիրը, որը նոյնպէս կը տպագրուի, երբ աւարտուի:

12 MOORE THOMAS, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, 1908, p. 329.

13 Նոյն տեղում, էջ 330:

14 Ֆրանսիական արծաթեայ դրամ որ յետագայում փոխարինուեց ֆրանկով:

...Երբ այս քերականութիւնը (ես նկատի ունեմ այժմ տպագրուողը) պատրաստ լինի, չէ՞ք առարկի, արդեօք, վերցնել քառասուն կամ յիսուն օրինակ, որոնք հինգ կամ տասը գինէայից աւելի չեն արժենայ եւ դրանց վաճառքով շարժել ուսեալների հետաքրքրութիւնը»<sup>15</sup>:

Ցարութիւն Աւգերեանը անգլերէն-հայերէն քերականութեան վերաբերեալ իր «Ինքնապատում օրագրութեան» մէջ գրում է. «Զկնի ուսանելոյ զվերծանութիւն տառից՝ ասաց ցՎարժապետ իւր տալ տպագրել իւրովք ծախիւք զԱնդղիական եւ զՀայերէն քերականութիւն իւր... եւ ինքն եւս սրբագրէր ընդ նմա զթերթս տպագրութեանն»<sup>16</sup>:

1819 թուականին Աւգերեանն ու Բայրոնը ձեռնամուխ են լինում հայերէն-անգլերէն քերականութեան ձեռնարկի հրատարակմանը՝ անգլիախօս ուսանողութեան համար: Սա այն ձեռնարկն էր, որի մասին Բայրոնը ակնարկում է գեռեւս 1817 թուականի մարտի 25-ին Զ. Մըրթյին հասցէագրուած նամակում. «...Միւսը դեռեւս ձեռագիր վիճակում է»<sup>17</sup>: Ցարութիւն Աւգերեանի ինդրանքով Բայրոնը հայերէն-անգլերէն ձեռնարկի համար մի առաջաբան է գրում: «Երբ 1816 թուականին ժամանեցի Վենետիկ... ես նոյնպէս,- գրում է Բայրոնը այդ առաջաբանում,- շատ ճանապարհորդների նման, խիստ տարուած էի Ս. Ղազար վանքի միաբանութեամբ, որը միաւորում է Կղերական հաստատութեան բոլոր առաւելութիւնները, առանց նրա մոլորութիւններից որեւէ մէկի»...

Այս մարդիկ,- այնուհետեւ շարունակում է իր միտքը բանաստեղծը Միւիթարեանների մասին,- մի հարստահարուած եւ բարձրատոհմ ազգի կրօնաւորներ են, ազգ, որը հրեանների յոյների պէս տարագիր ու ստրուկ է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման եւ վերջինների ստրկամտութեան: Այս ժողովուրդը հարստացել է առանց կեղեքելու եւ ստրկութեան մէջ արժանացել պատուի առանց բանսարկութեան: Բայց նրա տեղը այնուամենայիւ երկար ժամանակ եղել է «գերութեան տան» այնուամենայիւ:

15 Նոյն տեղում, էջ 336:

16 ՏԱՅԵՑԱՆ Հ. ՂԵԽՈՆԴ, Լորտ Պայրըն ի Ս. Ղազար, «Բազմավիպ», 1924, N 4, էջ 136:

17 MOORE THOMAS, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, 1908, p. 346:

մէջ, որ վերջերս բազմապատկել է իր անթիւ օթեւանները։ Թերեւս դժուար լինի գտնել մի ազգի տարեգրութիւն, որն աւելի զերծ լինի արատաւրող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինութիւնները խաղաղասիրութեան արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետեւանք։ Սակայն ինչպիսին էլ լինէր նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ լինի այն ապագայում, նրանց երկիրը յաւէտ պիտի մնայ աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մէկը, եւ թերեւս նրանց լեզուն աւելի խորը ուսումնասիրութեան պահանջ է դնում՝ աւելի գրաւիչ դառնալու համար։ Եթէ վատահենք Ս. Գրքին, դրախտը Հայաստանում էր, Հայաստան, որն իր հողի վաղանցուկ առընչակցութեան պատճառով Աղամի սերունդների պէս թանկ վճարեց մի մարդու երջանկութեան դիմաց, որն իր փոշուց էր ստեղծուած։ Հայաստանում էր, որ ջրհեղեղը սկսեց տեղի տալ եւ իջաւ աղաւնին։ Բայց դրախտը դեռ չըր հասցրել անհետանալ, երբ ծայր առաւ այդ երկրի տարաբախտութիւնը, քանզի երկար ժամանակ հզօր թագաւորութիւն լինելով հանդերձ, համարեա երբեք անկախ չեղաւ՝ եւ պարսից սատրապները, եւ թուրք փաշանները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստուած մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով»<sup>18</sup>։ Մաքի եւ հոգու խորաթափանց ընկալումով, մեծ ջերմութեամբ են տոգորուած այս տողերը՝ հայ ժողովրդի, նրա հոգեւոր գանձերի եւ դառը ճակատագրի մասին։ Բանաստեղծը Սխիթարեան հայրերի մէջ չի տեսել լոկ կրօնաւորների։ Նա հիացել է կղերական այս հաստատութեան իրենց ազգի համար կատարած հմկայական օգտակար աշխատանքով։ Քաղաքական նկատառումներից ելնելով Սխիթարեանները որոշում են չհրապարակել այդ առաջարեանը։ Դրա հետեւանքը եղաւ այն, որ Բայրոնի ոչ մի հաշտութեան ու զիջումի չգնացող խոռվայոյց հոգին ըմբոստացաւ այս անգամ արդէն առարկայական պատճառների դէմ։ Բանաստեղծը վիրաւորուեց եւ դադարեցրեց իր այցելութիւնները Ս. Ղազար։

Վերոյիշեալ առաջարանի, ինչպէս նաեւ հայերէն-անգլերէն քերականութեան ձեռնարկի մասին Յարութիւն Աւգերեանը նոյնպէս յիշատակում է իր «Ինքնապատում օրագրութեան» մէջ. «Ապա յորդորեաց զնա յօրինել միւս եւս քերականութիւն Հայերէն եւ Անգղիական յօդուտ ազգայնոց իւրոց։ Եւ նա արար զայն

<sup>18</sup> Նոյն տեղում, էջ 336, 337։

շարադրեալ զկանոնսն յիտալական բարբառ. զորս եհեղ նա յԱնդ-  
դիականն:- Զկնի աւարտման քերականութեանն թարգմանեաց  
նա ի Լատին բարբառոյ գերկոսին երրորդ թուղթս Սրբոյն Պօ-  
ղոսի առ Կորնթացիս, եւ հատուածս ինչ բանից ի մերոց նախ-  
նեաց ձեռնոտութեամբ վարժապետի իւրոյ, զորս եւ կամէր դնէլ  
ի քերականութեան անդ ի կրթութիւն անդդիացւոց: Ապա ի  
խնդրոյ Վարժապետի իւրոյ յօրինեաց նա զՅառաջաբանութիւն  
այնը քերականութեան յԱնդդիական բարբառ. այլ քանզի երգի-  
ծանէր նա ի նմա զՃաճիկս եւ զՊարսիկս, չկամեցաւ չ. Յարու-  
թիւն տպագրել զայն: Եւ նա թէպէտեւ խոստացաւ յօրինել միւս  
եւս անվնաս, բայց անդէն լքաւ սիրտ նորա... եւ այնպէս մնաց  
քերականութիւնն գրչագիր, եւ ինքն ո՛չ եւ զխոստացեալ դրամ-  
սն վասն տպագրութեան սորին»<sup>19</sup>: Յետագյում (1819 թ.) այն  
հրատարակուել է մի ուրիշ անդլիացու՝ էդուարդ Լոմբի օժան-  
դակութեամբ: Ի միջի այլոց է. Լոմբին Յ. Աւգերեանը նոյնպէս  
սովորեցրել է հայերէն:

Թուրքերի եւ պարսիկների հասցէին ասուած սուր խօսքե-  
րի պատճառով վերոյիշեալ առաջաբանը դեռեւս երկար ժամա-  
նակ մնաց անտիպ: Յետագյում թումաս Մուրը գտաւ այն բա-  
նաստեղծի թղթերում եւ առաջին անդամ հրատարակեց նրա մա-  
հուանից վեց տարի անց՝ 1830 թուականին Լոնդոնում լոյս ըն-  
ծայուած «Լորդ Բայրոնի կեանքը, նամակները եւ օրագրերը»  
խորագրով գրքում: Դրանից յետոյ միայն այն թարգմանուեց  
Մխիթարեանների կողմից եւ առաջին անդամ հայերէն լոյս տե-  
սաւ «Մարդկաբաղ քերթողաց անդդիացւոց» (Հայերէն եւ անդլե-  
սաւ «Մարդկաբաղ քերթողաց անդդիացւոց») (Հայերէն՝ «ի թղթոց Լորտ Պայրընի» խո-  
րէն) գրքում 1852 թուականին՝ «ի թղթոց Լորտ Պայրընի» խո-

րագրով:

Այս առաջաբանը դեռեւս անցեալ գարում թարգմանուել է  
նաեւ ֆրանսերէն եւ ռուսերէն: Այսպէս, եւրոպացի անուանի հա-  
յագէտ Գ. Ա. Շըռումպֆի (1844-1892) հանրայայտ գրքից, ուր  
տեղ են գտել Բայրոնի՝ հայերին վերաբերող նամակները եւ վե-  
տեղ են գտել Բայրոնի՝ հայերին վերաբերող նամակները եւ վե-

<sup>19</sup> ՏԱՅԵԱՆ Հ. ՂԵՒՈՒԴԻ, Լորտ Պայրընի ի Ա. Ղազար, «Բազմավէպ», 1924, N  
4, էջ 136:

<sup>ակղբին</sup><sup>20</sup>: Այսինքն, փաստօրէն այդ հանրայայտ առաջաբանը ֆրանսերէն թարգմանուել եւ հրատարակուել է աւելի շուտ, քան հայերէն:

Ս. Ղազար կղզում կայացած հանդիպումները մեծ ազդեցութիւն ունեցան Բայրոնի վրայ եւ 1823 թուականի Յուլիսին նա, նախքան Յունաստան մեկնելը, վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին: Շատ յուզիչ է եղել բանաստեղծի բաժանումը Մխիթարեաններից: Երբ բանաստեղծի մակոյկը հեռացել է տեսադաշտից, Յարութիւն Աւգերեանը եւ Սուքիաս Սոմալեանը, այս «երկու ալեփառ ծերունիներն իրարու երես նայեցան... մեկնած էր ան, զոր տարիներով սիրած էին իրենց անառակ որդուոյն պէս. ան պիտի մեկնէր դէպի Առեւելք... եւ երկուքին ալ աչքերէն զոյդ մը արցունքի կաթիլներ գլորեցան ու տղու պէս լացին»<sup>21</sup>:

Իտալիայից մեկնելով Բայրոնը իր հետ տաղաւ ջերմ տպաւորութիւններ եւ յիշողութիւններ հայ նշանաւոր մարդկանց հետ ունեցած հանդիպումներից ու զրոյցներից: Դժուար է հաւանաբար յիշատակել եւրոպացի մի այլ բանաստեղծի, որ մինչ Բայրոնը այդքան սերտ անձնական առընչութիւն ունենար հայ իրականութեան հետ:

<sup>20</sup> ՇՐՈՒՄՊՁ Գ., Ուսումնակրութիւններ հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուսու (ԺԴ-ԺԹ դար), թարգմ. եւ լրաց. Գ. Զարբհանալեանի, Վենետիկ, 1895, էջ 115:

<sup>21</sup> ՈՐԹԾՈՅԱՆ Ռ., Լորու Պայրըն (Խ. Ս. Ղազար) «Բազմավէպ», 1932, N 6-7, էջ 272: